«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Ալվարդ Եղիազարյան

Ուսումնական հաստատություն՝
<<Երևանի հ. 45 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն

2. Գլուխ 1. Ընթերցանության խնդիրներն ու նպատակները

3. Գլուխ 2. Տեքստի շուրջ կազմակերպվող աշխատանքը մայրենիի դասաժամերին

4. Գլուխ 3. Ընթերցանության դերը սովորողի ինքնուրույն մտածողության ձևավորման և զարգացման գործընթացում

5. Գլուխ 4. Ընթերցանության դերը սովորողի քննադատական մտածողության ձևավորման և զարգացման գործընթացում

6. Եզրակացություն

7. Օգտված գրականության ցանկ

Ներածություն

Տարրական դասարաններում դրվում են սովորողի համակողմանի զարգացման հիմքերը, ուստի տարրական կրթության մեջ կարևորվում են նաև այնպիսի որակների ձևավորումն ու զարգացումը, որոնք անհրաժեշտ են մարդուն ամբողջ կյանքի ընթացքում: Ելնելով կրթական չափորոշչային պահանջներից, այսօր անհրաժեշտություն է առաջանում որոնելու կրթական գործընթացի կազմակերպման համապատասխան միջոցներ և ձևեր, որոնց օգնությամբ կարելի է ձևավորել ազատ, ստեղծագործող, ինքնուրույն և քննադատաբար մտածող անհատ, որն ունակ է հետագա ինքնազարգացման: Եվ այստեղ մեզ օգնության է գալիս **ընթերցանությունը**, որը սովորողի բազմակողմանի զարգացման, գիտելիքների ձեռքբերման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է համարվում:

Կարդալը մտավոր գործունեություն է, որի միջոցով հարստանում ու զարգանում է սովորողի խոսքը, երևակայությունը, ներաշխարհը, ճաշակը: Ընթերցանությունն օգնում է երեխային կապվել ժամանակի հետ , նրա մեջ արթնացնում է ամենակարևորը՝ սովորել զարգացնել իր ինքնուրույն գործունեությունը, սեփական երևակայական և քննադատական մտածողությունը: Այս խնդրի լուծման ճանապարհին հիմնականը ընթերցողական կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումն է: Այդ կարողությունների շնորհիվ է սովորողը ծանոթանում մայրենի լեզվի գանձերին, կարողանում հարթել գրքերի աշխարհ թափանցելու ճանապարհը: Ընթերցանությունը ձևավորում է գրագետ խոսք, օգնում է ամբողջացնել սեփական եսը, ստեղծել և փոխանցել արժեքներ: Սակայն գաղտնիք չէ, որ այսօրվա երեխաները քիչ են ընթերցում կամ էլ ստիպողաբար և դժկամությամբ են կարդում, որովհետև գերադասում են իրենց ազատ ժամանակն անցկացնել համակարգչի ու հեռուստացույցի առջև: Ո՞րն է դրա պատճառը, ի՞նչ անել և ինչպե՞ս անել, որպեսզի երեխան հրաժարվի դրանցից և նախապատվությունը տա գրքին ու գիրք կարդալուն: Ինչպես գերմանացի մեծ քնարերգու Գյոթեն է ասել ՝Մարդը չի սիրում այն, ինչ ինքը չի հասկանում՝: Մանկավարժական գրականության մեջ էլ է նշվում, որ ընթերցանության նկատմամբ ի սկզբանե անտարբեր երեխաներ չեն լինում: Պարզապես անհրաժեշտ է ընթերցանության ճիշտ կազմակերպում, հարկավոր է սովորեցնել հաղթահարելընթերցանության մի շարք բարդություններ, անհրաժեշտ

է ընթերցանության նկատմամբ սեր և հետաքրքրություն ձևավորել սովորողի մոտ, որպեսզի երեխան ցանկանա ընթերցել, քանզի գիրքը մարդու համար անհատնում գիտելիքների աղբյուր է: Այստեղից էլ հետևություն, որ ընթերցանության հմտությունը համարվում է հաջողակ ուսման բանալի, բոլոր գիտելիքների դռները բացող կախարդական բանալի և այն պետք է ծառայի սովորողի արժեքային համակարգի ձևավորման, մարդկային բարձր արժեքների ուսուցման համար: Քանի որ տարրական դպրոցի կրթության որակը մեծապես կախված է ընթերցանության ճիշտ կազմակերպման գործընթացից, այսինքն՝ ընթերցանությունը կարելի է դիտել որպես բոլոր առարկաների արդյունավետ ուսուցման հիմնաքար երեխայի ուսումնական գործունեության ընթացքում, ապա միանշանակ կարելի է ասել, որ ընթերցանությունը հանդիսանում է որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում: Ընթերցանության հիմնախնդիրը միշտ էլ արդիական է եղել և ես, ուսումնասիրելով այս թեման, ցանկանում եմ պարզել, թե ինչպե՞ս է ընթերցանությունն ազդում սովորողների ուսումնական գործընթացի վրա և արդյո՞ք ընթերցանությունը պետք է դիտել որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում:

Գլուխ 1

Ընթերցանության խնդիրներն ու նպատակները

<<Ընթերցանություն>> բառը միանշանակ չէ: Այն դիտվում է իբրև անձի դաստիարակության և զարգացման հիմնական միջոց: Ընթերցանության ուսուցումը մի ամբողջ համակարգ է, որը լուծում է մի շարք խնդիրներ. լսելու, կենտրոնանալու, մտածելու, սեփական մտքերն ազատ արտահայտելու կարողության ձևավորում, գրագետ խոսքի ձևավորում, սահուն և արտահայտիչ ընթերցելու կարողություն: Այն ենթադրում է մտավոր, ճանաչողական և խոսքային գործունեություն: Դա բարդ գործընթաց է, քանի որ սովորողը պետք է ընկալի գրքային բառը, խոսքը, արտահայտությունը և այն փոխարինի ինքնուրույն համարժեքով, ընկալի տեքստի բովանդակությունը և այն զուգակցի կարդալու հմտության զարգացման հետ: Տարրական դասարաններում անհրաժեշտ է ապահովել կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության ընդհանուր կարողությունների ու հմտությունների ձևավորումը: Այս դասարաններում ուսուցչի գերխնդիրը դառնում է **սովորել սովորեցնելը:** Դա նշանակում է, որ աշակերտները պետք է տիրապետեն ոչ միայն տարրական ուսումնական գործունեության որոշակի կարողությունների ու հմտությունների, այսինքն՝ կարդալ, գրել, խոսել, լսել, այլև պետք է կարողանան մտածական գործառույթները վերլուծել, ընդհանրացնել, վերացարկել և այլն: Մեր օրերում ընթերցանության ուսուցումը դիտվում է իբրև անձի դաստիարակության և զարգացման հիմնական միջոց: Հետևաբար այն պետք է ապահովի կայուն գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ոչ միայն ուսումնական նյութի ինքնուրույն ընթերցման առումով, այլև հնարավորություններ ստեղծի կարդացածի գործուն ընկալման համար: Մայրենի լեզվի տարրական դասընթացի նպատակն է իրականացնել մի շարք խնդիրներ ու պահանջներ, որոնք հիմնականում կապվում են ընթերցանության հետ: Ընթերցանության հիմնական խնդիրներից է երեխաների մեջ մշակել ու զարգացնել կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր հիմնական հատկանիշներով: Դրանք են՝

. **կարդալ ճիշտ,** այսինքն՝ ձայնով, պարզ ու հստակ ընթերցում, որի ընթացքում տառերի, վանկերի ու բառերի բացթողումներ, կրկնություններ չեն լինում, երբ բառերի արտասանությունը համապատասխանում է արտասանության և շեշտադրության արդի պահանջներին,

. **հասկանալով,** այսինքն՝ կարդալը պետք է լինի գիտակցական, որի ժամանակ կարդացողը ճիշտ, լրիվ և պարզ հասկանում է իր կարդացածը,

. **սահուն կամ վարժ**, երբ սովորողը կարդում է այնպիսի արագությամբ, որի ժամանակ ապահովվում է ընթերցածի բովանդակության լրիվ ըմբռնումը ընթերցողի և լսողների կողմից, .**արտահայտիչ,** երբ կարդացողը կարողանում է մտովի զգալ և իր ձայնի ելևէջներով, դադարներով ու փոփոխությամբ վերակենդանացնել այն ապրումներն ու հույզերը, որ հեղինակը դրել է իր տողերի մեջ , այսինքն՝ ճիշտ է ընտրել կարդալու տեմպն ու հնչերանգը: Ընթերցանության խնդիրներից ու նպատակներից են նաև՝

. գործնական կերպով սովորեցնել մայրենի լեզուն՝ հարստացնել երեխաների բառապաշարը, մշակել ու զարգացնել երեխաների լեզվական կարողությունները, .
աշխարհաճանաչողական տարրական տեղեկություններ տալ շրջապատի բնական ու հասարակական երևույթների մասին,

. իրականացնել երեխաների բարոյական,
գեղագիտական դաստիարակության ուղղությամբ դպրոցի առջև դրված խնդիրները,
. ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,
. հետևողականորեն զարգացնել երեխայի բանավոր և գրավոր խոսքը,
. ապահովել երեխայի անձի զարգացումը՝ նպաստելով նրա ինքնաճանաչմանը,
ինքնադրսևորմանը, ձևավորել համագործակցային ունակություններ, համակեցության որակներ:

Ընթերցանության հիմնական խնդիրներից մեկն էլ սովորողների մտավոր զարգացումն է, նրանց նոր գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը, որոնք ոչ միայն պետք է նպաստեն նրանց կրթական մակարդակի բարձրացմանը, այլև երեխաներին պետք է նախապատրաստեն ուսումնական տարբեր առարկաներից համակարգված դասընթացների ուսումնասիրությանն անցնելուն:
Ընթերցանության համար առաջադրվող յուրաքանչյուր նյութ, որ զետեղված է տարրական դասարանների դասագրքերում, դաստիարակչական կողմի հետ միասին անպայման ունի իր կրթական արժեքը: Սակայն ուսուցումն ընդգրկում է ոչ միայն գիտելիքների հաղորդումն ու ընկալումը, այլև գիտելիքների ձեռքբերման ուղղությամբ սովորողների կատարած ինքնուրույն աշխատանքը: Այսպիսով, ընթերցանության դասը ոչ միայն պետք է գիտելիքներ տա, այլև խթանի նրանց ինքնուրույն մտավոր գործունեությունը, զարգացնի տրամաբանական մտածողությունը: Այս բոլոր նպատակներն իրականացնելու համար ուսուցչին օգնության է գալիս մայրենի լեզուն՝ <<այդ զարմանալի մանկավարժը>>:

.Ա. Ե. Տեր – Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա: Տարրական դասարաններ, ձեռնարկ, ՝Լույս՝հրատարակչություն,Երևան, 1980թ.

Գլուխ 2

Տեքստի շուրջ կազմակերպվող աշխատանքը մայրենիի դասաժամերին

<<Մարդուն տվեք ընթերցանության նկատմամբ սեր և այն բավարարելու միջոցներ ու հազիվ թե ձեզ չհաջողվի նրան դարձնել երջանիկ>>:

Ջոն Գերշել

Ընթերցանությունը բարդ հոգեֆիզիոլոգիական երևույթ է: Վանկերն ու բառերը համադրելը, տեքստեր կարդալը, դրանք ըմբռնելն ու վերարտադրելը, տեքստի շուրջ հարցադրումներին պատասխանելը, հարցեր ձևակերպելը, ունկնդրած կամ կարդացած տեքստերից անհրաժեշտ տեղեկություններ քաղելը, բոլոր գրական ժանրերի մեջ ճիշտ և արագ կողմնորոշվելն անմիջականորեն կապվում են կարդալու կարողության հետ, ուղեղի և խոսքի ապարատի աշխատանքի հետ: Գիտենք, որ կարդալու կարողությունն առաջին հերթին ձևավորվում է մայրենիի դասերին: <<Չսովորելու արմատը՝ չկարդալն է>>: Այս բանաձևումը փաստում է, որ կարդալու կարողության հիմքերը դրվում են տարրական դասարաններում, ուստի անհրաժեշտ է , որ հետևողական ու մեթոդապես ճիշտ կազմակերպված աշխատանքի միջոցով սովորողի մեջ ձևավորել կարդալու այնպիսի կարողություն, որը ժամանակի ընթացքում վերածվի անհրաժեշտության՝ դյուրին դարձնելով կրտսեր դպրոցականի համար բնագրերի ընթերցումը, ընկալումն ու վերարտադրումը: Հակառակ դեպքում մենք նրան կզրկենք ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, տարբեր աղբյուրներից ինքնուրույն օգտվելու հնարավորությունից: Հենց այս նկատառումով էլ գրաճանաչության ուսուցումը կապվում է կարդալու ուսուցման հետ, երեխայի մեջ կարդալու կարողության մշակման հետ՝ որպես նրա ընդհանուր զարգացման և մտավոր առաջընթացի հզոր խթան: Այսինքն, կարդալու կարողությունը մի կողմից խիստ կարևոր գործնական կարողություն է, մյուս կողմից՝ սովորողի ինքնազարգացման ու ինքնակրթման միջոցով գիտելիքներ ձեռք բերելու հզոր զենք: Կարդալը մտավոր գործունեություն է, որը երեխայից պահանջում է տեսողական, լսողական և տարածական մտածողությունների զարգացում: Այս է պատճառը, որ տարրական

դասարաններում կարդալու հմտությունների ճիշտ մշակումն ու որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելը դառնում է ուսուցչի ամենահիմնական խնդիրներց մեկը: Այս խնդիրը մայրենիի դասաժամերին իրականացվում է տեքստի շուրջ կազմակերպվող աշխատանքների միջոցով, որոնք կատարվում են փուլերով:

Առաջին փուլ: Աշխատանք տեքստի շուրջ մինչ ընթերցումը:

Այս փուլում , պայմանավորված ուսումնասիրվող ստեղծագործության բնույթից, լուծվում են հետևյալ նպատակներից որևէ մեկը. կանխագուշակել ընթերցվող նյութի բովանդակությունն ըստ վերնագրի, ենթադրություններ կատարել տեքստի նկարագրման վերաբերյալ, ստեղծել ստեղծագործության բովանդակությանը համահունչ հուզական տրամադրություն:

Երկրորդ փուլ: Աշխատանք տեքստի շուրջ կարդալու ընթացքում:

Այս փուլում կատարվում է տեքստի սկզբնական ընթերցում՝ սկզբնական ծանոթություն ստեղծագործության հետ: Տեքստին ծանոթանալու եղանակի ընտրությունը հիմնականում կախված է սովորողների ընթերցողական կարողություններից: Տեքստին ծանոթանալու եղանակներից առավել նախընտրելի են սովորողների ինքնուրույն լուռ ընթերցանությունը, սովորողների բարձրաձայն ընթերցանությունը, դերերով ընթերցանությունը: Կարելի է նաև տեքստը հատվածներով ընթերցել և առանձին հատվածների կապակցությամբ քննարկումներ անցկացնել:Դա չի խաթարի ամբողջական ընկալման հնարավորությունը: Կարևորն այն է, որ հատվածները բովանդակային ամբողջություն ունենան: Կարելի է երեխաներին երբեմն հանձնարարել դասանյութի շարունակությունը կարդալ տանը, եթե երեխաները յուրացրել են տեքստի առանցքային հարցերը: Կարելի է անցկացնել մեկնողական ընթերցանություն, երբ ուսուցիչն ինքն է կարդում բարդություն ներկայացնող հատվածները: Չի բացառվում նաև ընթերցումն ուսուցչի կողմից:

Երրորդ փուլն՝ աշխատանքն է տեքստի շուրջ կարդալուց հետո:

Տեքստի յուրացմանը սովորաբար հաջորդում է ստեղծագործական **վերլուծությունը և համադրումը ,** ընդ որում, անհրաժեշտ չէ նմանատիպ բնույթի առաջադրանքները տարանջատել, որովհետև դրանք օրգանապես միաձուլվում են՝ լրացնելով միմյանց , և տեքստի շուրջ տարվող աշխատանքը դառնում է առավել հետաքրքիր ու կենդանի: Անցկացվում է կարդացածի քննարկում, բանավեճ, տեքստի հիմնական գաղափարի վերհանում և ձևակերպում, աշխատանք դասագրքի և լրացուցիչ նյութերի հետ, աշխատանք վերնագրի և նկարագրման շուրջ, վերնագրի իմաստի քննարկում, նկարչի և ընթերցողի պատկերացումների համադրում: Կատարվում են նաև ստեղծագործական աշխատանքներ՝ աշակերտների ընթերցողական գործունեության տարբեր ոլորտների կապակցությամբ. հուզական, երևակայական,

բովանդակային ընկալման և այլն:

Գեղարվեստական ստեղծագործության լեզվի վերլուծությունը պետք է իրականացվի տեքստի շուրջ կատարվող աշխատանքի բոլոր փուլերում, բացի վերջին՝ ամփոփիչ փուլից:

Ինչպես արդեն նշվեց, մայրենիի դասավանդման նպատակը կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների ձևավորումն է և, սկսած տարրական դասարաններից, անհրաժեշտ է **գրագետ ընթերցող** ձևավորելու ամուր հիմքեր ստեղծել: Գրագետ ընթերցողն այն երեխան է, ով ընթերցանության նկատմամբ ունի կայուն սովորություն, այն ընկալելու ներքին պահանջմունք, ով տիրապետում է կարդալու տեխնիկային, կարդացածն ընկալելու հնարներին, գրքեր ընտրելու կարողությանը: Իսկ այդ նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. ձևավորել կարդալու տեխնիկան, տիրապետել տեքստի ընկալման հնարներին, կարողանալ կատարել վերլուծություն, որը նշանակում է սովորողին ներգրավել ընթերցողական ճիշտ գործունեության մեջ, այսինքն՝ զարգացնել ընթերցողության գործընթացի նկատմամբ ակտիվ հետաքրքրություն, կարդալու պահանջմունք,
2. դաստիարակել իբրև ազատ և անկախ մտածողության տեր անհատ, որն ունի ձևավորված գեղագիտական ճաշակ, այսինքն՝ ընթերցանության միջոցով երեխային ուղղորդել դեպի փոխհարաբերությունների, բարոյագիտական արժեքների աշխարհ,
3. զարգացնել կրտսեր դպրոցականի բանավոր և գրավոր խոսքը, խոսքային և հաղորդակցական մշակույթը, ստեղծագործական կարողությունները:

Այսպիսով, ընթերցանության դասերին տարվող աշխատանքները համակարգված են: Տեքստի շուրջ աշխատանքը հարկավոր է կազմակերպել այնպես, որ սովորողները պատկերացնեն, գիտակցեն, ապրեն ներկայացված իրադրությունները, հասկանան բովանդակությունը, ստեղծագործության հիմնական իմաստը: Տեքստի ուսումնասիրության այդ փուլերի պահպանումը օգնում է ուսուցչին կանոնավորելու իր աշխատանքը, նպաստում է կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների ձևավորման ու զարգացման հիմնախնդրի լուծմանը, օգնում է աշակերտների կողմից ստեղծագործության համակողմանի յուրացմանը:

Գլուխ 3

Ընթերցանության դերը սովորողի ինքնուրույն մտածողության ձևավորման և զարգացման գործընթացում

Սովորողի ինքնուրույն մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից մեկը: Մարդն սկսում է մտածել այն ժամանակ, երբ նրան անհրաժեշտ է որևէ հարց լուծել, որևէ խնդիր իրականացնել, իսկ այդ նպատակի իրագործմանը մեծապես նպաստում է ընթերցանությունը: Ընթերցանությունը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնելու ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնելու տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար: Դեռևս մանկական տարիքում և, հատկապես դպրոցում, պետք է արթնացնել, իսկ հետո՝ նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել գրական խոսքի խորության ընկալման կարողությունը: Ընթերցանության դասաժամերին երեխաները պետք է սովորեն լիակատար ընկալել տեքստը, այսինքն նրանք պետք է կարողանան երևակայության միջոցով ներթափանցել հեղինակի նկարագրած կյանք, ապրումակցել հերոսներին, համեմատել իրենց կյանքի և զգացմունքների հետ, հասկանալ հեղինակի գաղափարները: Իսկ ինչպե՞ս կազմակերպել սովորողների ուսումնական գործունեությունը, ինչպես հետևել սովորողների գրական զարգացման գործընթացին, որպեսզի երեխաներն ընկալեն գեղարվեստական ստեղծագործության գեղագիտական և բարոյական արժեքները, դասի ընթացքում ինչպե՞ս աշխատել, որպեսզի սովորողները դպրոցից հետո ևս ցանկանան ընթերցել: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի դասի ընթացքում նրանք՝

. խորհեն ընթերցածի շուրջ,

. ապրումակցեն հերոսներին,

. գնահատեն նրանց արարքները,

. իմաստավորեն նրանց խնդիրները,

.համեմատեն իրենց կյանքը գրական հերոսների կյանքի հետ,

. ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Երեխան պետք է խորհի ճշմարիտի և սխալի, սիրո և ատելության, բարու և չարի, մարդու հնարավորությունների ու աշխարհում նրա տեղի մասին: Դասի բովանդակության հիմքում, որի էությունը կրթությունն ու զարգացումն է, ընկած է սովորողների ինքնուրույն և ստեղծագործական գործունեությունը և ուսուցիչը դասաժամերին աշխատում է սովորողների ինքնուրույն գործունեության մի շարք փոխներգործուն ձևերի կազմակերպման վրա: Պետք է տանել բազմաբնույթ աշխատանքներ, որպեսզի երեխան կարողանա ինքնուրույն վերլուծել, քննարկել, մեկնաբանել, համեմատել: Ըստ ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուիի, կրթությունը պետք է կենտրոնանա սովորողի և նրա հնարավորությունների բացահայտման վրա: Դյուիի կարծիքով կրթության գործընթացի կազմակերպման համար ելակետ պետք է լինեն երեխայի հետաքրքրություններն ու փորձը: Կրթության գործընթացում կենտրոնական դեմքը երեխան է, սովորողը, <<… նա արեգակ է, որի շուրջ պտտվում է ողջ կրթական գործընթացը: Երեխայի ուժերը պետք է բացահայտվեն, հետաքրքրությունները՝ բավարարվեն, ընդունակությունները՝ մարզվեն >> / John Dewey, 1900/: Ինքնուրույն մտածողության ձևավորման ու զարգացման գործընթացում կարևորվում են դիդակտիկ խաղերը, որոնց ընթացքում երեխաները ցուցաբերում են իմացական և զգայական ակտիվություն: Խաղային գործունեությունը խթանում է նրանց երևակայությունը, մտածողությունը, խոսքը, զգացմունքները, ամրակայում է հիշողությունը: Խաղի մեջ յուրաքանչյուր մասնակից ունի իր դերը և նա սովորում է ապրել հասարակական կյանքով:

Աշակերտների կարդալու կարողությամբ են պայմանավորված մյուս առարկաների ուսումնառության արդյունավետությունը, մասնավորապես՝ մաթեմատիկայի, <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի, որոնց ուսումնասիրության ընթացքում ընթերցանությունը կարևոր միջոց է ծրագրով նախատեսված գիտելիքների յուրացման համար: Այդ առումով սովորողները հնարավորինս արագ պետք է ձեռք բերեն ինքնուրույն ընթերցանության հմտություններ և տեքստի շուրջ աշխատելու կարողություններ: Այդ հմտություններն ու կարողությունները զարգանում են սովորողի ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառմամբ: Ընթերցվող նյութի ակտիվ և ինքնուրույն ընկալմանը նպաստում են նաև նախնական առաջադրանքները: Հատկապես արդյունավետ են այն հարցադրումները, որոնց պատասխանելիս սովորողները պետք է վերհիշեն նախորդ դասարաններում ուսումնասիրած դասանյութերը: Այս դեպքում միաժամանակ զարգանում են տեքստի ինքնուրույն ընկալման կարողությունները և տրամաբանական մտածողությունը: Կարևոր նշանակություն ունեն նաև դասանյութերի վերջում տրվող այնպիսի հարցերն ու առաջադրանքները, որոնց կատարումը սովորողին մղում է ինքնուրույն վերլուծությունների, քննարկման, մեկնաբանման,

համեմատության, դատողական խոսք, բանավոր և գրավոր տրամաբանական խոսք կառուցելու , առաջադրված խնդրահարույց հարցերին ստեղծագործական լուծումներ գտնելու, որոնք էլ կազմում են ինքնուրույն մտածողության զարգացման հիմքը: Տեքստի շուրջ ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությանն է նպաստում նաև այնպիսի դասանյութերի ընթերցումը, որոնք իրենց մեջ ներառում են դադարներով և դադարից հետո վերարտադրողական, վերլուծական բնույթի, ստեղծագործական և կանխատեսումներ ենթադրող հարցադրումներին պատասխանելու պահանջներ: Տեքստի շուրջ ինքնուրույն աշխատանքի զարգացմանը նպաստում է նաև բավականին բարդ մի գործընթաց՝ տեքստի վերարտադրումը: Ինքնուրույն մտածողության զարգացմանը բավականին նպաստող և արդյունավետ միջոց է համարվում ձևափոխված պատմումը, երբ երեխան տեքստը պատմում է որպես մասնակից կամ ականատես: Այդ դեպքում աշակերտները գործողությունները պատմում են իրենց տեսանկյունից և սովորողին տրվում է ազատ ինքնարտահայտման հնարավորություն: Սովորողների ինքնուրույն մտածողության զարգացման գործում մեծ նշանակություն ունեն ինքնուրույն աշխատանքները: Ինքնուրույն աշխատանքի տեսակներից է տեքստի բովանդակության պլան կազմելը, այսինքն, երեխան կատարում է տեքստի՝ ընթերցած նյութի իմաստային խմբավորում, որն էլ նպաստում է նրան, որ երեխան իմաստավորված, հասկանալով վերարտադրի տեքստի բովանդակությունը, ոչ թե մեխանիկորեն շարադրի: Մեկ այլ տեսակ է պատմության շարունակության հորինումը, իրենց պատկերացմամբ ստեղծագործության որևէ տեսարան նկարելը և այլն:

Այսպիսով, ինքնուրույն մտածողությունը զարգացնում է երեխաների ինքնուրույն որոշումներ կայացնելու և դրանք հիմնավորելու կարողությունը, որն էլ նպաստում է ակտիվ, ինքնուրույն, մտածող անհատի ձևավորմանը:

.Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ս. Գիրգորյան, Վ. Սարգսյան, Հ. Խաչատրյան, Ե. Ջիլավյան, ՝Մայրենի 2-4՝: Ուսուցչի ձեռնարկ, ՝Զանգակ՝ հրատարակչություն, Երևան, 2011 թ.

Գլուխ 4

Ընթերցանության դերը սովորողի քննադատական մտածողության ձևավորման և զարգացման գործընթացում

Ժամանակակից ուսուցման գործընթացում կրթության հիմնախնդիրների շարքում իր կարևոր տեղն ունի սովորողների քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը, որն այսօր դիտարկվում է որպես կրթության արդի խնդիր և հասարակական պահանջ: Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերաիմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով:Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքում: Կիրառելով քննադատական մտածողությանը նպաստող մեթոդներ ու հնարներ, կրտսեր դպրոցականները ևս կարող են ակտիվ մասնակցել լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ցուցաբերել որոշումներ կայացնելու կարողություն: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական տեսակետը, ճշմարտությունը: Ինչպես նշում է Ջ. Բրունները <<… այսօր բավարար չէ երեխաներին բացատրել, թե ինչ անեն, օրակարգում այն հարցն է, թե ինչ են մտածում իրենց արածի մասին և ինչու են դա անում>> /Bruner J.1996/:

Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Քննադատորեն մտածող մարդը կարողանում է ինքնուրույն, ազատ, անկաշկանդ արտահայտել իր կարծիքը, իսկ որպեսզի լինի քննադատորեն մտածող, կարողանա դրսևորել արդյունավետ քննադատական մտածողություն, պետք է նախ և առաջ զարգացնել նրա ինքնավստահությունը, հավատը սեփական ուժերի հանդեպ, նա պետք է հասկանա, որ իր կարծիքներն ու մտքերը արժեքավոր են, պետք է լինի ուսումնական գործընթացի ակտիվ, ոչ թե պասիվ մասնակից, լսի և ընդունի բազմազան կարծիքներ, կարողանա քննարկել սեփական դատողությունները, իսկ հարկ եղած դեպքում՝ նաև կասեցնել:

Յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված է միայն հիմնական գիտելիքների ուսուցումը, որն անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար, իսկ մնացածը երեխաներն իրենք պետք է ինքնուրույն կերպով ստանան շրջապատից ու գրքերից: Այսինքն, յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է **սովորել սովորեցնելը:** Դրա վառ ապացույցը ինքնուրույն ընթերցանության ճիշտ կազմակերպումն է, որի դեպքում անպայման պետք է նկատի ունենալ սովորողի պատրաստվածության մակարդակը, ծնողների սոցիալական

վիճակը, դպրոցի գրադարանի ֆոնդը, երեխաների հետաքրքրությունների շրջանակը: Քննադատաբար իրականացվող ընթերցանություն կազմակերպելիս պետք է հաշվի առնել հետևյալ կարևոր պահանջները. երեխայի մեջ սերմանել ընթերցասիրություն, զարգացնել գեղարվեստական ստեղծագործության գաղափարը հասկանալու, ենթատեքստը կռահելու, կարդացածի մասին խորհելու, ինքնուրույն եզրահանգումներ, ընդհանրացումներ անելու կարողություններ: Դրանով երեխայի ընթերցանության գործընթացը դառնում է առավել հետաքրքիր և գրավիչ: Իսկ ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհով, ի՞նչ հնարներով: Անհրաժեշտ է կրտսեր դպրոցականի մեջ ձևավորել սեր և ընթերցանության նկատմամբ այնպիսի վերաբերմունք, որ նպաստի նրա մեջ անձնային բարձրարժեք որակների զարգացմանը, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը: Ընթերցանությունն ակտիվ գործընթաց է, որն ընթերցողին ստիպում է մտածել ընթերցվող նյութի շուրջ և հասկանալ իմաստը, այսինքն ընթերցողը պետք է գիտակցաբար ջանքեր գործադրի կարդացածը հասկանալու համար: Այսպիսով, աշակերտը կարդալու ընթացքում պետք է մտածի կարդացածի մասին, այլապես կարդացածի ընկալում տեղի չի ունենա: Քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդների ու հնարների կիրառումը օգնում է, որ

. ընթերցողը կարողանա հասկանալ, ընկալել իր կարդացածը,
. օգտագործի բնագրի առանձնահատկությունները, որոնք կօգնեն հասկանալ բնագրի իմաստը,
.վերահսկի իր ընկալման իմաստը և հասկանա, թե որ մասն էր իր համար անհասկանալի,
. չհասկանալու դեպքում փորձի գործադրել սեփական մտավոր կարողությունները:

Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից մեկը: Ռոբերտ Յանգը նշում է , որ քննադատական մտածողությունը ենթադրում է իմացական հմտությունների և ռազմավարությունների կիրառում, որը կմեծացնի ցանկալի արդյունքի հասնելու հավանականությունը, որ քննադատական մտածողությունը նպատակասլաց, պատճառաբանված, նպատակի իրագործմանն ուղղված մտածողություն է: Ըստ նրա, այդպիսի մտածողություն ունեցող անհատները վերոհիշյալ հմտություններն օգտագործում են գիտակցաբար : Իսկ քննադատական մտածողության առաջավոր մասնագետներից մեկը՝ Էննիսը, քննադատական մտածողությունը սահմանում է որպես <<ողջամիտ>> մտածողություն, որը միտված է որոշելու <<ինչին հավատալ կամ ինչ անել>>/ Ennis, 1989 /: Մեկ այլ աշխատությունում նա նշում է, որ քննադատական մտածելու նպատակն է գտնել ճշմարտությանը ամենամոտ գտնվող պատասխանը /Ennis, 2008 /: Սակայն դա չի նշանակում,

որ քննադատաբար մտածելու արդյունքը կբացահայտի ճշմարտությունը: Հետևաբար, թե որն է ճշմարտությունը, մեծ չափով կախված է մտածողի հմտություններից: Գրեթե բոլոր ականավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական մտածողության ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը, երբ սովորողն ակտիվորեն մասնակցում է ուսումնառության գործընթացին և ակամա սկսում է մտածել խնդրի շուրջ: Բացի դրանից նա լսում է իր ընկերների կարծիքը և տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը հնչած կարծիքների վերաբերյալ: Սովորողը կարող է ներկայացնել նաև այլ տեսակետ, որը նույնպես պետք է պատճառաբանված լինի: Տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում պարզ է դարձել, որ << Բանավեճ>> մեթոդը կարող է արդյունավետ կերպով կիրառվել ժամանակակից տարրական դպրոցի ուսուցման գործընթացում՝ որպես քննադատական մտածողությունը զարգացնող միջոց: Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման համար գոյություն ունեցող մոդելները հիմնվում են Բենջամին Բլումի կողմից մշակված տաքսոնոմիայի վրա: Տաքսոնոմիան կրթական չափորոշիչներն ու ուսումնական նպատակները ձևակերպելու և դասակարգելու, ուսումնական գործընթացը կազմակերպելու և ուսուցման արդյունքները գնահատելու աստիճանակարգ է: Տաքսոնոմիան կամ այսպես ասած ճանաչողական կամ իմացական խումբը բաղկացած է վեց մակարդակից: Դրանք են՝ գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, սինթեզ և գնահատում: Ներկայացնենք այդ վեց մակարդակները:

1.**Գիտելիք** - առաջին մակարդակում սովորողը կարող է հիշել, մտաբերել ուսուցման ընթացքում ներկայացված տեղեկատվությունը: Այն կարող է գիտակցվել փաստերի, կանոնների, դիագրամների, ձայնի միջոցով:

2. **Ընկալում** - կարող է սովորողը ցույց տալ, որ հասկացել է տեղեկատվությունը և կարող է այն վերափոխել տարբեր ձևերի: Տեղեկատվությունը կարող է իրականացվել սովորողի կողմից բառերով՝ բացատրության, ամփոփման, օրինակ բերելու և այլ ձևերով:

3. **Կիրառում-** տաքսոնոմիայի երրորդ մակարդակում սովորողը կարող է տեղեկատվությունը կիրառել՝ այն օգտագործելով կոնկրետ գործողության մեջ: Այդ գործողությունները կարող են լինել հաշվելը, գրելը, կարդալը, սարքավորումներ օգտագործելը և այլն:

4. **Վերլուծություն -** այս մակարդակում սովորողը կարող է ճանաչել տեղեկատվության հիմնական կառուցվածքը, այն տրոհել բաղկացուցիչ մասերի և որոշել դրանց միջև առկա կապերը: Սովորողը կարող է տարբերել փաստերը ենթադրություններից:

5. **Սինթեզ -** Բլումի տաքսոնոմիայի հիգերորդ մակարդակում սովորողը կարող է

տեղեկատվություն ստանալ տարբեր աղբյուրներից՝ իր տեսակետը, դիրքորոշումը ձևավորելու նպատակով:

6.Գնահատում - և վերջին՝ գնահատման մակարդակում, սովորողը կարող է որոշակի չափորոշիչներ կիրառել՝ օբյեկտի վերաբերյալ եզրահանգումներ անելու համար:

Այդ վեց մակարդակներին համապատասխան, սովորողից ակնկալվող վարքագիծը խիստ օգտակար է ճշգրիտ և հստակ նպատակներ սահմանելու և դրանց հասնելու գործում: Այդ գործողությունները նա սահմանում է որոշակի բայերի միջոցով:

Գիտելիք-վարք -> ասել, անվանել, նշել, պատմել, արտասանել, սահմանել, թվել, հաշվել, ձևակերպել, գրել…

Ընկալում - վարք -> ճանաչել, սեփական բառերով անվանել, նկարագրել, բնութագրել, համեմատել, հակադրել, բացատրել, օրինակ բերել…

Կիրառում - վարք -> կատարել, կառուցել, պատրաստել, լուծել, հաշվարկել, ցուցադրել, օգտագործել, ընտրել,գտնել, ուսումնասիրել, պատկերավորել…

Վերլուծում -վարք -> ամբողջը տարանջատել մասերի, բացահայտել նրանց միջև առկա կապերը, վեր հանել պատճառահետևանքային կապերը, փաստարկել, մեկնաբանել, քննել հետազոտել..

Համադրում -վարք -> ստեղծագործել, ստեղծել, շարադրել, ձևակերպել, կանխատեսել, պլանավորել, նախագծել, առաջարկել, հիմնավորել, դասակարգել…

Գնահատում - վարք -> որոշել շարադրանքի կառուցման տրամաբանությունը, ընգդծել չափանիշները, գնահատել տրամաբանությունը, եզրակացություններն ըստ առկա փաստերի և տվյալների, կարևորել և գնահատել գործունեության արդյունքները, քննադատել, արդարացնել…

Բոլոր վեց մակարդակներում էլ սովորողին անհրաժեշտ են համապատասխան հմտություններ, սակայն քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից ելնելով պետք է առավելապես շեշտել **վերլուծության, սինթեզի և գնահատման մակարդակները:**

Ըստ Բենջամին Բլումի եզրահանգման, <<Այն, ինչ կարող է սովորել ինչ-որ մեկը, կարող են սովորել բոլորը: Ամեն ինչ կախված է նախորդ և ներկա ուսուցման պայմաններից և միջավայրից >>:

Բլումի տաքսոնոմիայի մակարդակները դասավորված են աճման կարգով, նախորդ մակարդակը հաջորդի հիմքն է: Ըստ նրա՝ յուրաքանչյուր ուսուցման միջավայրում շատ կարևոր է սկսել ամենացածր մակարդակից և աշխատել բարձր մակարդակների աստիճանաբար ապահովման ուղղությամբ, այսինքն՝ քննադատական մտածողության համար անհրաժեշտ են

այնպիսի հմտություններ, որոնք ձևավորվում են վերլուծում, համադրում և գնահատում մակարդակներում: Այսինքն, քննադատական մտածողությունը դա դիտարկման, փորձի, դատողության և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու, սինթեզելու և գնահատելու մտավոր գործընթաց է: Ըստ Լիզա Ցուի, քննադատական մտածողության զարգացումը մեծապես կախված է նաև դասավանդման տեխնիկայից / instrutional technique/ /Tsui, 1999/: Տարրական դպրոցում քննադատակաան մտածողության տեխնոլոգիայի մեթոդների ընտրությունն անմիջականորեն կապված է ուսուցանվող նյութի բովանդակության, բարդության և ծավալի հետ: Քանի որ քննադատական մտածողությունը սովորողից պահանջում է որոշակի գաղափարներ, խնդիրները քննելու և հետևություններ անելու պատասխանատվություն, ուստի շատ գիտնականներ պնդում են , որ աշակերտի և ուսուցչի միջև երկխոսություն, բանավեճ և քննարկման ծավալումը քննադատական մտածողության ձևավորման և զարգացման թիվ մեկ գրավականն է: Քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունները հնարավոր չէ կիրառել առանց խնդրո առարկայի վերաբերյալ նախնական գիտելիքների, ուստի քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը պետք է լինի և առարկայական ծրագրի և ուսումնական պլանի զարգացման հիմքում: Այսպիսով, ելնելով վերը նշվածից, կարելի է եզրակացնել, որ քննադատաբար իրականացվող ընթերցանությունը մեծ դեր և նշանակություն ունի սովորողի քննադատական մտածողության ձևավորման և զարգացման գործընթացում և կարող է գործիք հանդիսանալ խնդիրների կարգավորման համար:

http/www.osf.am>uploads>2017/10

Բենջամին Բլում- վիքիպեդիա https://herearmenia.wordpress.com.>

Եզրակացություն

Այսպիսով, ընթերցանության հիմնախնդիրը տարրական դասարաններում համարելով արդիական և կյանքի հրամայական պահանջ, ես ուսումնասիրեցի թեման և ներկայացրեցի այս հետազոտական աշխատանքը: Հանգեցի այն եզրակացության, որ սկսած առաջին դասարանից, ուսումնական գործունեության հենց առաջին օրերից, պետք է ճիշտ ուղու վրա դնել ընթերցանության ուսուցումը: Գիտակցելով, որ ընթերցանության ուսուցումը դիտվում է իբրև անձի դաստիակության և զարգացման հիմնական միջոց, պետք է առավել կարևորել գրագետ ընթերցող ձևավորելու գործընթացը: Քանի որ կարդալու կարողություններն առաջին հերթին ձևավորվում են մայրենիի ժամերին, պետք է համակարգված աշխատանքներ տանել տեքստի շուրջ: Այնպես պետք է կազմակերպել տեքստի շուրջ կատարվող աշխատանքները, որ սովորողները կարողանան պատկերացնել, գիտակցել, ապրել, ապրումակցել, կարողանան ներկայացնել իրադրությունները, հասկանան ստեղծագործության բովանդակությունը, հիմնական իմաստը, ստեղծեն հուզական տրամադրություն: Ուսուցչի խնդիրն է նպաստել աշակերտների կողմից ստեղծագործության համակողմանի յուրացմանը, ընթերցողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ընթերցանությունը նպաստում է նաև սովորողի ինքնուրույն և քննադատական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը: Դրա համար պետք է կիրառել ինքնուրույն և քննադատական մտածողության ձևավորմանը և զարգացմանը նպաստող մեթոդների ու հնարների գործիքակազմ, որը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև զարգացնում է քննադատական մտածողությունը, գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու հարստացմանը: Այսինքն, հարկավոր է տանել բազմաբնույթ աշխատանքներ, որպեսզի սովորողը կարողանա ինքնուրույն վերլուծել, քննարկել, մեկնաբանել, խորհել, խնդրահարույց հարցերին ստեղծագործական լուծումներ գտնել, ազատ և անկաշկանդ արտահայտել իր կարծիքը, ինքնուրույն որոշումներ կայացնել, տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել, կերտել սեփական տեսակետը, ճշմարտությունը: Սովորողը պետք է կարողանա պլանավորել այս կամ այն գործունեության վերջնարդյունքը, հստակ ձևակերպել և տեսանելի դարձնել այն , այնուհետև անցնել դրա իրագործմանը: Դա սովորողի ուսումնառության հաջող արդյունքի մասին ուսումնական մտադրությունն է, նպատակի իրագործումն է: Միայն այդ դեպքում է սովորողը գիտելիքներ մտապահողից ու վերարտադրողից վերաճում ուսուցման գործընթացի գործուն մասնակցի՝ ինքնուրույն որոշումներ կայացնողի, որն էլ կյանքի արդիական ու հրամայական պահանջն է: Ինչպես տեսնում ենք, այս բոլորի հիմքում ընկած է սովորողի կարդալու տեխնիկան:

Այսպիսով, վստահ կարելի է ձևակերպել, որ ընթերցանությունը գործիք է հանդիսանում տարրական դասարաններում սովորողի ուսուցման գործընթացում:

Օգտված գրականության ցանկ

1.Ա. Ե. Տեր – Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա: Տարրական դասարաններ, ձեռնարկ, <<Լույս>> հրատարակչություն,Երևան, 1980թ.

2.Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ս. Գիրգորյան, Վ. Սարգսյան, Հ. Խաչատրյան, Ե. Ջիլավյան, <<Մայրենի 2-4>>: Ուսուցչի ձեռնարկ, <<Զանգակ>> հրատարակչություն, Երևան, 2011 թ.

3. Կ.Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, <<Զանգակ>> հրատարակչություն, 2014 թ.

4.Կ.Թորոսյան, Ա. Բալայան, Կ.Չիբուխչյան, Մայրենիի դասերի պլանավորումը, <<Զանգակ>> հրատարակչություն, 2016թ.

5.Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս 1, <<Զանգակ>> հրատարակչություն, 2013թ.

6.Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս 2, <<Զանգակ>> հրատարակչություն, 2013թ.

7.Բենջամին Բլում- Վիքիպեդիա

https://herearmenia.wordpress.com